“ՓԱՆԻԿԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ

Եռամյա զարգացման ծրագիր

«Փանիկի Առողջության Կենտրոն» ՊՈԱԿ զարգացման և կառավարման ծրագիրը մշակելիս հիմք են ընդունվում մեր գործունեությունը կառավարող օրենսդրական և նորմատիվային փաստաթղթերը, ինչպես նաև առողջապահության ռազմավարությունը:

''Փանիկի ԱԿ'' ՊՈԱԿ-ը սպասարկում է Փանիկ համայնքը ինչպես նաև հարակից վեց բնակավայր՝ Անուշավան, Սպանդարյան, Մեղրաշեն, Արնշատ, Գեղանիստ, Գետափ, ընհամենը 10168 ազգաբնակչությամբ:

Մեր գործութնեության պլանավորման հիմնական ուղղություններն են հանդիսանում կառավարման համակարգի կատարելագործումը, շենքային /տարածքային/ պայմանների բարելավումը, բժշկական սարքավորումներով և գործիքներով հագեցվածության բարձրացումը և թարմացումը նոր բուժտեխնիկայով՝ ելնելով հիմնարկության գործունեության առանձնահատկությունից, մարդկային ներուժի զարգացումը:

Բուժ.հիմնարկի կառավարման հիմնական կանոնները սահմանված են գործող օրենսդրությամբ և ընկերության կանոնադրությամբ՝ հետևաբար զարգացման ծրագիրը այս ուղղությամբ պետք է առնչվի գլխավորապես հիմնարկի ներքին կառուցվածքի զարգացմանը՝

- Ընկերությունում ինչպես նաև ԲՄԿ-երում բուժսպասարկման որակը բարձրացնելու համար արդիականացնել բուժգործիքները և գույքը;
- կազմակերպության և ԲՄԿ-երի շենքային պայմանների բարելավումը, կենտրոնացված ջեռուցման ապահովումը կնպաստի ազգաբնակչության այցերի ակտիվացմանը դեպի բուժհաստատություն;
- առողջ ապրելակերպի քարոզում առողջ ազգաբնակչության շրջում;
- սքրինինգային հետազոտությունների ժամանակին իրականացումը ազգաբնակչության առավելագույն ընդգրկվածությամբ;
- բուժանձնակազմի մասնագիտական պարբերական վերապատրաստումը;

Այս ամենը ընկերության բնականոն գործունեության նախապայմաններից մեկն է։

Ֆինանսական միջոցների կարիք առաջանալու պարագայում կօգտագործվի համապատասխան հոդվածների ֆինանսավորումը, հովանավորների և բարերարների տրամադրված միջոցները ինչպես նաև Համաշխարհային Բանկի առողջապահական ծրագրերում ընդգրկվածությունը։

«Փանիկի Առողջության Կենտրոն» ՊՈԱԿ

Տնօրեն      Ա.ՍԵՐՈԲՅԱՆ